

Ռ. Կ. Հովհաննիսյան

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ինչպես հայտնի է, ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելիս ստանում ենք ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, որը հանդիսանում է գլխավոր նախադասության ասուցական կամ մտածական բայով արտադայտված ստորոգյալի ծավալուն օրյեկտր, Այդպիսի երկրորդական նախադասությունների բնույթը, ինչպես նաև կառուցվածքային որոշ առանձնահատկություններ պայմանավորված են այն հանդամանքով, թե տվյալ նախադասության էլակետը հանդիսացող ուրիշի ուղղակի խոսքը ինչպիսի՝ եղանակավորությունն է:

ա) Երբ տվյալ երկրորդական նախադասության էլակետը հանդիսացող ուրիշի ուղղակի խոսքը պատմողական նախադասություն է, ապա այդպիսի երկրորդական նախադասությունը հանդիսանում է գլխավոր նախադասության ասուցական կամ մտածական բայերի համար խոսքի օրյեկտր: Հին հայերենում այդպիսի երկրորդական նախադասությունները բարդ ստորադասական նախադասության գլխավոր մասին սովորաբար կապակցվում են քի կամ երկ շաղկապներով. օրինակ՝

«Եկայք սպանցուք զնա և ընկեսցուք ի մի ի գրոց աստի և ասացուի, երկրորդական շար եկեր զնա» (Մննդ., 1 է, 20): «Զբվան հայր մեր խոռոցաւ՝ քի որ մէնջ վաղ առ երթիցէ, զնա թագաւորեցուցէ» (Եզն., 80): «Ես յառաջագոյն իսկ ասացի՝ երկ կարի ստամբակ ոմն ևս դու» (Եղիշէ, 135):

բ) Երբ ուրիշի ուղղակի խոսքը հանդիսանում է կամք. կարգադրություն. խնդրանք արտահայտող հրամայական նախադասություն, ապա նրան համապատասխանող երկրորդական նախադասությունը ստանում է կամքի ու ցանկություն օրյեկտր երկրորդական նախադասության ձև, որը իր ուրույն կառուցվածքով տարբերվում է մյուս կարգի ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններից: Այդպիսի երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասության մեջ, որպես խնդրառու ունենում են հրամայել, կարգադրել, խրնդրել և այլ բայ-ստորոգյալներ, երկրորդական նախադասության ստորոգյալը ժամանակակից հայերենում զրվում է ըզձական (ապառնի և սրնցյալի ապառնի), իսկ հին հայերենում՝ առաջին կամ երկրորդ ապառնի ժամանակներով: Բարդ ստորադասական նախադասության գլխավոր և երկրորդական մասերի միջև կապակցությունը կատարվում է ժամանակակից հայերենում ու (ռուսական ազգեցությամբ նաև՝ որպեսզի) շաղկապով, իսկ հին հայերենում՝ զի շաղկապով:

գ) Երբ ուրիշի անուղղակի խոսքը համապատասխանում է հարցական եղանակավորություն ունեցող ուրիշի ուղղակի խոսքին, այդպիսի երկրորդական նախադասությունը կոչվում է անուղղակի հարցում և ունենում է կառուց-

վածքային յուրահատուկ գծեր, որոնք քննության են առնվում սույն հոդվածում:

Մ. Արեղյանը քննարկվող տիպի նախադասությունները անվանում է անուղղակի հարցական խոսքեր¹:

Ինչպես հայտնի է, անուղղակի հարցում արտահայտող երկրորդական նախադասությունները կարող են հանդես գալ շարահյուսական այս կամ այն պաշտոնով. նրանք կարող են լինել ենթակա, որոշիչ, անուղղակի խնդիր, ուղիղ խնդիր և այլն՝ նայած թե գլխավոր նախադասության որպիսի՝ անդամի ինչպիսի՝ լրացում են հանդիսանում. օրինակ՝

Ներակա—«Այժմ ինձ չի մտահոգում, քե ինչո՞ւ իմ սերը մնաց անպատասխան» («Ավանգարդ», 25/2—1960, № 24, էջ 4):

Առօրյա—Սամվելը ամբողջ օրը տանջվում էր այն մտնով, քե ինչպես հայտնի նրան (Մուշեղիեն— Խ. Հ.) հոր շտապար մահը (տպուրից) («Րաֆֆի», հատ. 7, 53):

Անուղղակի խնդիր — «Մի ժողովուրդ, որը սուրբ ձեռքում ամեն բույս պետք է հսկեր, քե ո՞ր կողմից է գալիս քչնամին, նրան ասում էին՝ սուրդ ցած դիր» («Րաֆֆի», հատ. 7, 206):

Այստեղ մենք քննության կառնենք անուղղակի հարցում արտահայտող այն նախադասությունները, որոնք հանդես են գալիս ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնով:

Ուղիղ խնդրի պաշտոնով հանդես եկող անուղղակի հարցումները ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից հայերենում գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու ունենում են ասացական, մտածական, զգայական ընկալման, իմացական նշանակությամբ ներգործական սեռի որևէ բայ-ստորոգյալ. օրինակ՝ «Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս, թէ ո՞ր եղևալ են մարմինք վկայիցն Աստուծոյ» (Ագաթ., ՊԷ, Ի, 223, էջ 117): «Ապա տայր հրաման Շապուհ թագաւորն Պարսից իւրոցն, երթևալ տեսանել՝ թէ զինչ իրք իցեն ի բանակին Հայոց թագաւորին Արշակայ» (Բուդ., 4-րդ, Ի, 1883, 114): «Եւ զարթեալ Մուրթը ի տեսլենէ անտի յայսմանէ... և յամենայն զօրութենէ՛ իւրմէ կամէր գիտել եթէ զինչ իցէ տեսիլն զոր ետես անդէն ի նմին գիշերի» (Եսթեր. մկ, 12): «Եւ գիտէր բոյր նորա ի հեռաստանէ, տեսանել թէ զինչ անցր անցանիցեն ընդ նա» (Նյից, Բ, 4): «Արդ զուն գիտեալ, տե՛ս խորհեաց ընդ միտս քո թէ զինչ գործեսցես» (Բուդ., 5, 1Ը, 208): «Եւ տեսեալ գնա Զրուանայ, ոչ գիտաց եթէ ո՞ր իցէ» (Նզն., ԵԱ, 2, Ա, 80):

Համեմատիր նաև ժամանակակից հայերենի հետևյալ նախադասությունները.

«Ախ, ես այնքան հափշտակվեցա քեզանով, որ բոլորովին մոռացա հարցնել, թե ովքեր են եղած քեզ հետ» («Րաֆֆի», հատ. 7, 115): «Թնակակից իշխանությունները զարմանալով հարցնում էին իրար, թե ինչ է պատահել արդյոք թագուհուն» (Մուրացան, Գ. Մարգարիտունի, 230): «Միթե դու մոռացել ես, թե որպիսի կատաղությամբ Արշակ թագավորը և նրա հայր սկսեցին ոչնչացնել նախարարական իշխանությունները» («Րաֆֆի», հատ. 7, 510): «Այդ ժամանակ նրան արդեն պատմել էին, թե ինչեր կատարվեցան յուր բացակայության միջոցին» («Րաֆֆի», հատ. 7, 442): «Իսկ հետո քնտանիքը որոշում է, թե ինչ պետք է

¹ Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, 1912, 297:

դեռել առաջին հերթին, ով պետք է հետաձգի նոր վերարկու գնելը» (Ավանգարդ», 3/3 — 1960, № 27, էջ 4)։

Գրաբարում ուսումնասիրվող նախադասությունների համար որպես խրնդ-րառու գլխավոր նախադասության մեջ կարող են հանդես գալ նաև հարադիր կազմություն ունեցող բայեր. օրինակ՝

«Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս յեփցեն նմա զորոգայթ բանիւք» (Մատթ., ԻԲ, 15)։ «Խորհուրդ ի մէջ առնոյր (Թագաւորն Պարսից—Ռ. Հ.), հարցեքին առնել հրամայէր վերստին, զի տեսցեն և յայտ արասցեն՝ թէ ուստի՝ եղև սկիզբն պատերազմացն և մարտին» (Քուգ., 3, ԻԱ, 48)։

Կառուցվածքային տեսակետից ուսումնասիրվող նախադասությունները իմանականում կարելի է բաժանել երկու խմբի.

ա) Անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց կազմում բացակայում են հարցական-հարաբերական դերանուններ. օրինակ՝

«Եւ եթէ հարցանես՝ երէ տանջանք զո՞նք բարոյն. ասեն. ոչ գոն» (Վզն., 201)։ «Արկ դու զարծաթդ ի բովս և քննես երէ սո՞ւրբ իցէ» (Ագաթ., ՀԹ, 610, էջ 312)։ «Ասէ ցնա Իսրայէլ. երթ և տես երէ ո՞ղջ իցէն Լիբաւրն Բո և խաշինք» (Մենգ. Հէ, 14)։ «Հաւատացէք դմա զաշխարհն՝ Վրաց. հարցէք զաշխարհէն երէ զո՞հ իցն զգմանէ» (Նդիշէ, 135)։ «Եւ լուիդէս դու բանս ի նմանէ. և ապա գիտասցես դու՝ երէ կա՞յ յուխտի Բո և պահէ՞ զղաշինս Բո քէ ոչ ...» (Քուգ., 4, ՄԴ, 166)։ «Հարցէք և տեսէք՝ երէ ծնաւ ուրեմ արու» (Սրեմիա, Հ, 6)։

Եամանակակից հայերենում այս կարգի երկրորդական նախադասությունների կազմում հաճախ առկա է լինում արդյո՞ք բառը, որը ավելի շեշտում է պարզորոշ է դարձնում տվյալ նախադասության եղանակավորությունը. օրինակ՝

«Տեր բերդակալը ցանկանում է իմանալ, թե արդյո՞ք բանալիները յուր ժոտ պիտի մնան մինչև վեհի գալը («Մուրացան, Գ. Մարգպետունի, 12)։ «...Ուրիշները ինձ հարցնում են, թե հիշում եմ արդյո՞ք, որ միասին կարգում էինք» (Քումանյան, 3, 119)։

Եթի անուղղակի հարցումը տրված է երկրորդականի ձևով, ապա նա երկ-րայական իմաստ արտահայտող քն շաղկապի միջոցով կապվում է իրեն հա-կադրվող մի այլ նախադասության հետ. օրինակ՝

«Ուստի ինքն իրան մտածում էր, թե արդյո՞ք խոսն այդ մասին իշխանի հետ, բանա նրա առաջ հին վերքերը ... քն անվթար պահպանե դեռ յուր արքա-լական վեհությունը» (Մուրացան, Գ. Մարգպ., 165—166)։ «Նա կամենում էր ստուգել, թե արդյո՞ք բերդակալն ինկապես միացած է ապստամբների հետ, քն ստիպված և առերես է հպատակում նրանց ճնշումներին» (Մուրաց., Գ. Մարգպ., 93)։

Բ) Անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց կազմում առկա են հարցական-հարաբերական դերանուններ և մակրայններ՝ որպիսի, որ, ընդէր, ուստի, որպէս, ո/ով, զիարդ, որչափ, ինչպիսի, զինչ, ուր և այլն, որոնք հարցական նախադասության մեջ քնդհանուր վերացական կերպով առանց կոնկրետացման ցույց են տալիս գործողության օբյեկտը կամ ենթական, գործողության այս կամ այն հանգաման-ճեղեղակար, 1—8

րը (պատճառ, ժամանակ, նպատակ), առարկայի հատկությունը և այլն-
օրինակ՝

Ապա խորհուրդ արարին. թէ ո՞րպէս բժրունել կարասցեն զնա» (Բուգ.,
5, 16, 199): «Արդ տեսէք, թէ որպէս ջնջեցան գայթակղութիւնքն ձեր» (Աղայի.
ճժԵ, 813, 424): «Իսկ թերևս ասիցես դու թէ՛ ո՞ր պահէ՛ գերկիւղածս իւր
(Աղաթ., ԻԱ, 229, 119): «Արդ հարկ է ի պատճառս շարեացն գալ, և ցուցանել
թէ ուստի լինին շարիքն» (Յզն., 19): «Երթ առ Պապ արքայ, հա՛րց և տե՛ս՝ թէ
ընդ՛ էր է այդ» (Բուգ., 16, 200): «Մանեայ գրեզ, ասէ. զի ցուցցէ՛ եթէ յառա-
ջագոյն գիտէր թէ որպիսի ոք լինելոց է» (Յզն., 118): «Հարցի զնոսա բանիք և
ոչ գաճիւ, թէ զի՛նչ համարիք ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ
(Յղիշէ, 175):

Այն հարցական-հարարերական բառերը, որոնց հատուկ է հոլովման
կատեգորիան, անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական
նախադասութիւններում հանգես են գալիս այս կամ այն հոլովով, ըստ որում
լուրարանչուր կոնկրետ դեպքում նրանց հոլովը կախված է այն հանգաման-
քից, թե երկրորդական նախադասութեան ինչպիսի՛ անդամ են հանդիսանում.
օրինակ՝

«Եւ տեսեալ զնա Զրուանայ, ոչ գիտաց եթէ ո՞ ո՛ր իցէ» (Յզն., 80): «...Քա-
գաւորն Հայոց Արշակ գառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայէր տե-
սանել՝ թէ ով ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս օգնականութեան...» (Բուգ.,
4, Ի, 110): «Ապա խորհուրդ արարին՝ թէ զո՞ դոցեն իւրեանց առաջնորդ»
(Բուգ., 3, ժԵ, 38): «Յայնժամ խորհուրդ արարեալ թագաւորին և իշխանացն,
և համօրէն իսկ աշխարհին, թէ զո՞ արժանի այնմ իմիք գտանիցեն» (Բուգ.,
3-րդ. ժԳ, 30): «Իսկ լուեալ է ձեր՝ եթէ ո՞չ ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլո-
րութիւն» (Յղիշէ, 176): «Ապա յայնմ ժամանակի միարան խորհեցան աշխար-
հօրէն խորհուրդ, եթէ ո՞ւմ պարտ իցէ զհայրապետութեան զկաթողիկոսութիւն
ունել» (Բուգ., 3, ժԵ, 39): «Եւ անգամ ոչ գիտէր գայրն, թէ յորմէ՛ զեղջէ իցէ»
(Բուգ., 4, Ը, 226): «Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ առնեմ գայսս
(Մատթ., Ի, 27):

Ինչպէս պարզ երևում է բերված բոլոր օրինակներէց, հին հայերենում
անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասու-
թիւնները գլխավորին ստորադասվում են միայն քէ և երէ շաղկապների միջո-
ցով: Զի շաղկապի գործածութիւնը այս դեպքում որպէս օրենք բացառվում է:
Ժամանակակից հայերենը այս տեսակետից հարազատ է մնացել գրարարի
սկզբունքներին և պահպանել է անուղղակի հարցական նախադասութիւնների
շաղկապական կառուցվածքը:

Արդի հայերենում այդպիսի կապակցական ֆունկցիայով հանդես է գա-
լիս միայն քն շաղկապը. օրինակ՝

«Նա զգաց, քն ինչպէս անձրևի շրից գոյացած մի առվակ ծլլալեն ներս
խուժեց բարձի վրայով» (Նար-Դոս, 1, 40, 1955): «Օ, եթէ գիտե՞նայիր, քն որքան
ծանր է այդ ինձ համար, որքան դժվարատար» (Մուրաց., Գ. Մարդպ., 287):
«Հասկանում եք արդյոք ընկերներ, քն ի՞նչ ապրեց հոգիս այդ գիշերին»
(Ե. Զարեհ, Բ. Ե., 1955, 93): «Երեխադ շարունակ հարցնում է, քն ո՞ւր է գնա-
ցել հայրիկը և ինչու չի գալիս» (Մ. Թորոմյան, Անմար կրակներ, 1959, 449):

Մինչև այստեղ բերված օրինակները ցույց են տալիս, որ հայերենում
անուղղակի հարցական նախադասութիւնները երկու դեպքում էլ — և հարցա-

կան-հարաբերական բառերի բացակայության, և նրանց առկայության ղեկ-
քում—կապակցական կառուցվածքային տեսակետից զուտ շաղկապական են:
Այդ է պատճառը, որ հայերենի անուղղակի հարցական նախադասություննե-
րում հարցական-հարաբերական բառի նախադասության սկզբում զրվելը
սլաբադիր և բացառություն չճանաչող քերականական օրենք չէ. շնայած
անուղղակի հարցական նախադասություններում հարցական-հարաբերական
բառերը սովորաբար զրվում են նախադասության սկզբում, շաղկապից հետո.
բայց չի բացառվում նաև նախադասության որևէ այլ մասում նրանց զրվելը.
օրինակ՝

«Եւ չգիտեինք, և չգիտեին, թէ հորձանքը սե մեղ ո՞ւր է տանում» (Ե. Չա-
րենց, Ը. Ե., 1955, 11):

«Իս պատմում էի նրան, թէ մեր
Երկիրը ի՞նչ է հիմա դառնում
Եվ ինչ ուժեր են հիմա հառնում
Իր երազած այն աշխարհի դեմ»
(Ե. Չարենց, Ը. Ե., 1955, 107):

Հիշյալ երևույթը հետևանք է այն բանի, որ հայերենում այդպիսի ղեկ-
քերում գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցական ֆունկ-
ցիան կատարում են շաղկապները, իսկ հարցական-հարաբերական բառերը
որպես երկրորդական նախադասության անդամներ, կարող են նախադասու-
թյան մեջ փոխել իրենց տեղերը: Իսկ այն լեզուներում, որտեղ գլխավոր և
անուղղակի հարցում արտահայտող երկրորդական նախադասությունների կա-
պակցական ֆունկցիան կատարում են հենց իրենք հարցական-հարաբերական
բառերը՝ առանց շաղկապների, այդ հարցական-հարաբերական բառերը պար-
տադիր կարգով միշտ զրվում են երկրորդական նախադասության սկզբում:
Ռուսաց լեզվում, օրինակ, անուղղակի հարցական նախադասությունների կա-
ռուցվածքային բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հար-
ցական-հարաբերական դերանունը միշտ գտնվում է երկրորդական նախադա-
սության սկզբում²: Քանի որ ռուսաց լեզվում անուղղակի հարցական նախա-
դասությունների ստորադասումը բարդ նախադասության գլխավոր մասին
կատարվում է ոչ թե շաղկապների, այլ հարցական-հարաբերական ղեկա-
նունների ու մակբայների միջոցով, ուստի ռուս քերականագիտության մեջ հի-
շյալ նախադասությունները կազմում են կառուցվածքային ուրույն խումբ՝
նսկադրելով շաղկապավոր երկրորդական նախադասություններին: Երացատ-
րա-շաղկապային տիպից քննարկվող տիպը (խոսքը անուղղակի հարցական
նախադասությունների մասին է — Խ. Հ.) տարրերվում է հարաբերական
ստորադասությամբ:

Ի տարրերություն ռուսերենի, հայերենում անուղղակի հարցում արտա-
հայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները մտնում են շաղ-
կապավոր երկրորդական նախադասությունների խմբի մեջ և ունեն այդ
խմբին յուրահատուկ բոլոր էական հատկանիշները:

² Современный русск. яз. Синтаксис, М., 1957, 404.

³ С. Е. Кричков, Л. Ю. Максимов. Типы сложноподчиненных предложений, ВЯ, 1960, № 1, 18.

լինում են դեպքեր, երբ ուսումնասիրվող նախադասությունները գլխավորին ստորադասվում են առանց շաղկապի, օրինակ՝

«Գուք ինքնին գիտէք՝ որպէս անմարթ է առն հրէի հպիլ կամ մերձենալ առ այլազգիս» (Գործք, Ժ, 28): «Բայց Բառնարայ առեալ զնա՝ էած առ առաքեալսն և պատմեաց նոցա՝ որպէս ի ճանապարհին ետես զտէր» (Գործք, Թ, 27): «Տեսանէ՛ս, քանի՛ խարեաց զմեզ կախարդն Մերութանն» (Բուդ., 5, ԽԳ, 214): «Գրէր և ցուցանէր մոզաց և մոզակտաց և ամենայն մեծամեծաց կողմանց կողմանց աշխարհաց՝ որպէս զիցն օգնականութեամբ զգործ քաջութեան իմոյ յառաջ մատուցեալ» (Նղիշէ, 51): «ևս իսկ ցուցից նմա որչափ պարտ ից՝ նմա շարշարիլ վասն անուան իմոյ» (Գործք, Թ, 16):

Ինչպես երևում է բերված օրինակներից, գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությունը կատարվել է առանց շաղկապի, այսինքրն՝ շարահարություն միջոցով, ինչպես կապակցության այդ ձևը անվանում է Մ. Արեղյանը: Հարցական-հարաբերական բառերի առկայությունը երկրորդական նախադասություններում բոլորովին էլ չի նշանակում, թե այդտեղ կապակցությունը կատարվում է հարաբերական բառերի միջոցով, Հարաբերական բառերով կատարվող կապակցության դեպքում հարաբերական բառը պարտադիր կերպով պետք է զույգի երկրորդական նախադասության, սկզբում: Մինչդեռ հայոց լեզվում նույնիսկ այն դեպքերում, երբ սնուղղակի հարցում արտահայտող երկրորդական նախադասությունը գլխավորին միանում է առանց շաղկապի, հարցական հարաբերական բառը կարող է նախադասության սկզբում չլինել, օրինակ՝

«Հիշում եք, այ խալխ, Թոնանոցը շինելիս ինչե՛ր էր ասում Աթանեսը» (Նոր-Այր, Ոլորտներում, 1958, 217):

Նույնիսկ եթե ենթադրենք, որ հիշյալ կառուցվածքի նախադասությունները այն անցումային ձևերն են, որոնց միջոցով լեզվի մեջ հարցական դերանունները հետզհետե վերածվում են հարաբերական բառերի և կատարում կապակցական ֆունկցիա, այնուամենայնիվ հայոց լեզվում անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները որպես որակ իրենց էական հատկանիշներով շաղկապավոր նախադասություններ են՝ անկախ այն բանից, թե շաղկապը առկա է, թե գորություն մը էրմբրոնվում:

Վաստակավոր հայագետ Մ. Արեղյանը նկատել է, որ շնայած հիշյալ կարգի նախադասությունների արտաքին ձևական նմանությանը՝ գլխավորի հետ հարաբերական բառերով կապակցվող երկրորդական նախադասություններին, այդ երկուսի միջև գոյություն ունի իմաստային զգալի տարբերություն, որը չպետք է վրիպի հետազոտողի ուշադրությունից:

«Անուղղակի հարցական խոսքերը, — գրում է Մ. Արեղյանը, — երբ առանց լե շաղկապի, շարահարությամբ են կապակցվում գլխավորի հետ, ձևով նույնանում են հարաբերական ընդհանրացական խոսքերի հետ, օրինակ՝ «Ասա ինձ՝ ինչ կուզես» խոսքը շաղկապական հարցական է, երբ նշանակում է՝ «Ասա ինձ, թե ինչ կուզես», հարաբերական ընդհանրացական է, երբ նշանակում է՝ «Ասա ինձ՝ ինչ որ կուզես»¹:

Բացի դրանից անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններում տրամաբանական շեշտը միշտ ընկնում

¹ Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահարություն, Վազարշապատ, 1912, 298:

լ հարցական-հարաբերական բառի վրա, որի հետևանքով ստացվում է շրջուն շարահասություն, այսինքն՝ բայի բազմադրյալ ժամանակով արտահայտված բարդ ստորոգյալի օժանդակ բայը միշտ դրվում է դերբայից առաջ, մինչդեռ «հարաբերական ընդհանրացական» նախադասություններում տրամաբանական շեշտը երբևք հարաբերական բառի վրա չի ընկնում, որի հետևանքով ստորոգյալի շրջում սովորաբար տեղի չի ունենում, կամ էլ այն տեղի է ունենում տրամաբանական շեշտը նախադասության որևէ այլ անդամի, բայց ոչ երբևք հարաբերական բառի վրա ընկնելու հետևանքով. օրինակ՝

«Տեսե՛ք՝ ինչ դորձեր են նրան վստահում» (Ծ. Չարենց, Բ. Ծ., 117):
 «Կենանք, տեսնենք, Հասմիկը և Շուշանիկը մեզ համար ինչ են պատրաստել ուտելու» (Րաֆֆի, 7, 410):

Անուղղակի հարցական ուղիղ խնդիր նախադասությունները, ինչպես ընդհանրապես շղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, սովորաբար նախադասության մեջ կարող են ունենալ իրենց «ներկայացուցիչը» արտահայտված որևէ ցուցական դերանվամբ, որը ընդհանուր վերացական կերպով, առանց կոնկրետացման, արտահայտում է տվյալ երկրորդական նախադասության բովանդակությունը: Ցուցական դերանվամբ արտահայտված այդ ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) ուղիղ խնդիրը մեծ մասամբ շեշտում և առաջին պլանի վրա է մղում երկրորդական նախադասության ամբողջ բովանդակությունը. օրինակ՝

«Այլ տես դու զայս, թէ զհարդ զօրութեամբ աստուածութեան իւրոյ պանեաց հաստատուն զսուրբ վկայսն սիրելիսն» (Աղաթ., 120): «Չայդ ոչ դիտէք, որչափ երկայնամիտ լինի՛մ ևս ի վերայ ձեր» (Նղիշէ, 170):

Անհրաժեշտ է նշել, որ ցուցական դերանվամբ արտահայտված այդպիսի ֆակուլտատիվ ուղիղ խնդիրը չի նույնանում հարաբերյալի հետ: Ամենից առաջ, հարաբերյալը պետք է անպայմանորեն երկրորդական նախադասության մեջ ունենա մի հարաբերական, որի միջոցով միայն նա կապվում է ամբողջ երկրորդական նախադասության հետ, մինչդեռ քննարկվող տիպի նախադասություններում հանդես եկող ֆակուլտատիվ ուղիղ խնդիրները երկրորդական նախադասության հետ միշտ կապվում են անմիջակառորեն՝ առանց հարաբերականի: Բացի դրանից, հոգնակի հարաբերականի հետ երբևք չի կարող դրվել եզակի հարաբերյալ, մինչդեռ ֆակուլտատիվ ուղիղ խնդիրը սովորաբար լինում է եզակի՝ անկախ այն բանից, թե երկրորդական նախադասության մեջ եղած հարցական բառը ի՛նչ թվով է դրված. օրինակ՝

«Իսկ մայրն գիտացեալ յիշեալ զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զսրդին իւր» (Րուզ., 4, ԽԴ, 132):

Առաջին հայացքից կարող է թվալ, թե վերոբերյալ օրինակում՝ զայն և որոց բառերը հարաբերյալ և հարաբերական են, Սակայն նրանք այդպիսին չեն: Ինչն այն պարզ պատճառով, որ հոգնակի հարաբերականի հետ (որոց) չկրկարող դրվել եզակի հարաբերյալ (զայն): Այդ իսկ պատճառով Ստ. Մախառյանը որոց բառը դիտել է ոչ թե որպես հարաբերական, այլ որպես հարցական բառ և ամբողջ երկրորդական նախադասությունը թարգմանել է որպես անուղղակի հարցում. — «Իսկ մայրը այս տեսնելով՝ ի՞նչն, թե ո՞ւմ էր նվիրել ինքը իր որդուն ծնած ժամանակ»:

Անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասության և դիսավոր նախադասության կապի սերտության աստիճանը

պայմանավորված է մի շարք նանգամանքներով, որոնցից յուրաքանչյուրի վրա անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել:

ա) Եկեղեցական նախադասության հարցական եղանակավորության աստիճանը: Գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի սերտության աստիճանը մեծ չափով կապված է այն հանգամանքից, թե ո՞րքանով է երկրորդական նախադասությունը երանգավորված անուղղակի հարցման նշանակությամբ. որքան ակնառու է հարցական նշանակությունը, այնքան ավելի թույլ է բարդ նախադասության մասերի կապը և ընդհակառակը. Թվարանական լեզվով ասած՝ հարցական նշանակությունը տվյալ դեպքում հակադարձ համեմատական է գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի սերտությանը: Երկրորդական նախադասության հարցական նշանակությունը սակայն լնքն իրենով պայմանավորված մի հանգամանք չէ և հիմնականում կախված է գլխավոր նախադասության մեջ հանդես եկող խնդրառու բառի լեքսիկական իմաստից, այսինքն՝ նրանից, թե տվյալ խնդրառու բառը հարցական նշանակություն պարունակում է, թե ոչ: Այս տեսակետից անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի.

1. Երբ գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու հանդես է գալիս հարցանեմ (ժամանակակից հայերեն՝ հարցնել) կամ հարցում նշանակող մի այլ բայ խնչպես՝ հարցափորձեմ, հարցաքննեմ, քննեմ, հարցաքննի՞ն լինիմ և այլն, խնչպես նաև որևէ ասագական բայ հարցման նշանակությամբ, ապա երկրորդական նախադասության մեջ հարցական նշանակությունը լինում է առավել ցայտուն, իսկ բարդ նախադասության մասերի միջև եղած կապի սերտությունը՝ առավել նվազ: Այսպիսի երկրորդական նախադասությունները կարելի է անվանել բուն անուղղակի հարցում. օրինակ՝

«Եւ երթեկս առեալ ընդ խորանն, առէ ցնա... թէ ընդէր եղէր իմ իշնամի, Արշակ արքայ հայոց» (Քուզ., 4, ԾԴ, 166—167): «Եւ ոչ որ ի նոցանէ կհարց՝ եթէ «դու ո՞վ ես ընդ մեզ» (Կղիշէ, 160):

2. Երբ գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու հանդես է գալիս իմացական, ասացական, մտածական, խնչպես և զգայական ընկալման նշանակությամբ օրեւէ բայ, որը բոլորովին էլ հարցման մոմենտ չի պարունակում, ապա երկրորդական նախադասության մեջ հարցական նշանակությունը կամ չափազանց թույլ է լինում, կամ ամբողջովին բացակայում է, որի հետևանքով բարդ ստորադասական նախադասության մասերի միջև եղած կապը ավելի սերտ է դառնում: Այդպիսի երկրորդական նախադասությունները անուղղակի հարցական են միայն շնորհիվ իրենց կառուցվածքային առանձնահատկությունների, իսկ իմաստային տեսակետից նրանք ոչ թե հարցում են արտահայտում, այլ ընդհակառակը՝ իրենց մեջ պարունակում են որևէ հարցման պատասխանը ընդհանուր և անորոշ ձևով՝ առանց հիմնկրետացման օրինակ՝

«Այլ վասն սրբոյն Հոսիսիմեայ զուք իսկ ինքնին զիտէլ, րև ո՞րպէս պահեաց զճա տէր և ալրեցոյց ի ձեռաց ձեռոց, ի սլղծուրեմի անօրէնուրեան» (Ազաթ., ԻԱ, 233, 126): «Բայց Բառնարայ առեալ զնա՝ էած առ տաքեալսն և պատմեաց նոցա՝ որպէս ի ճանապարհին ետես զտէր» (Գործք, Թ. 27): «Արդ հարկ է ի պատճառս շարեացն զայլ և ցուցանել՝ թէ ուստի լինին շարիքն» (Եզն., 19):

բ) Քննարկվող կարգի բարդ ստորադասական նախադասությունների գլխավոր և երկրորդական մասերի կապի սերտության որոշիչ գործոն է հանդիսանում նաև երկրորդական նախադասության շարադասությունը: Անուղղակի հարցում արտահայտող առաջադաս ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կապը գլխավորի հետ ավելի նվազ սերտ է քան վերջադասուներինը: Պետք է նշել, սակայն, որ երկրորդական նախադասության շարադասությունը այդ սերտության որոշման անմիջական գործոն չէ, նա իր այդ դերը կատարում է միջնորդարար, այսինքն՝ երկրորդական նախադասության առաջադաս լինելը ուժեղացնում և շեշտում է նրա հարցական նշանակությունը: Երկրորդական վերջինս իր հերթին ազդում է բարդ նախադասության գլխավոր և երկրորդական մասերի կապի վրա՝ թուլացնելով նրա սերտությունը. օրինակ՝

«Թե՛ վասն որոց իրաց մեծնեցաւ Է ևա, պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն» (Ղուկ., Ը, 47), «Բայց քի Պարս գի՛նչ կոչեն զնա, ոչ գիտեմ» (Խոր., ՊԷ, 2, ԿԳ, 197), «Բայց քի որպէս կամ ուր սորա իրբ անցին անհիշատակելի, ևս ոչ գիտեմ» (Խոր., ՊԷ, 2, Է, 112): «...Սի քի որպէս կամ իս զնեալ իցլ, զայն ոչ ամենեքին գիտեն» (Եղն. 5, Ա, 174):

Բերված օրինակներից վերջինում գլխավոր նախադասության մեջ առկա է զուցական ղերանվամբ արտահայտված ֆակուլտատիվ ուղիղ խնդիր (զայն), որը ընդհանուր կերպով, առանց կոնկրետացման փոխարինում է առաջադաս երկրորդական նախադասությանը: Այդպիսի ուղիղ խնդիրը նվազի շեշտում և առաջին պլանի վրա է մղում երկրորդական նախադասության ողջ բովանդակությունը:

Բերված օրինակներից երկուսն էլ նաև, որ անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների առաջադաս գործածության ղեկավարում ևս ստորադասումը կատարվում է քի, շաղկապի միջոցով, քի շաղկապի նման օրինակ գործածությունը առաջադաս անուղղակի հարցական նախադասությունների կառուցվածքային բնորոշ և տարբերիչ գիծ է, քանի որ մյուս բոլոր ղեկավարում ուղիղ խնդիր երկրորդական նախադասության առաջադաս գործածության ղեկավարում քի շաղկապը փոխարինվում է գի-որ:

գ) Ուսումնասիրության առարկա հանդիսացող բարդ ստորադասական նախադասությունների գլխավոր և երկրորդական մասերի կապի սերտությունը մեծ չափով կախված է նաև այն հանգամանքից, թե անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը որքանով է կորցրել ուրիշ ուղղակի խոսքի հատկանիշները և ստացել անուղղակի խոսքին յուրահատուկ գծեր:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ որքան ավելի է տվյալ երկրորդական նախադասությունը իր էական հատկանիշներով և կառուցվածքային գծերով նեոանում ուրիշ ուղղակի խոսքից ու հարում անուղղակի խոսքին, այնքան ավելի սերտ է լինում գլխավոր և երկրորդական նախադասությունների կապը:

Վերը նշել ենք, որ անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները համապատասխանում են ուրիշի հարցական ուղղակի խոսքին և ծագումաբանորեն առաջացել են վերջիններից:

Ինչպես հայտնի է, ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի վերածելիս տեղի են ունենում անձնական ղերանումների և բայի դիմավոր ձևերի ղեմքերի սթոշակի փոփոխություններ: Սակայն հին հայերենում հանդիպում են անուղղակի հարցում արտահայտող երկրորդական նախադասությունների գոր-

ծածուկթյան դեպքեր, երբ երկրորդական նախադասության կառուցվածքային բնորոշ գծերի, նույնիսկ ստորադասական շաղկապի առկայության պայմաններում բացակայում են դերանձանների և բայի դիմավոր ձևերի՝ ուրիշի անուղղակի խոսքի համար անհրաժեշտ փոփոխությունները, մի հանգամանք, որը որոշակիորեն թուլացնում է գլխավոր և երկրորդական նախադասությունների կապը. օրինակ՝

«Գրէր և ցուցանէր մոզայ և մոզպետաց և ամենայն մեծամեծաց կողմանց կողմանց աշխարհաց՝ որպէս զիցն օգնականութեամբ զգործ քաջութեան իմոյ յառաջ մատուցեալ» (Նդիշէ, 51); «Եւ տեսնալ զնա Զրուանայ... հարցանէր, եթէ ո՞վ ես դու» (Նզն., 80); «Վրթանէս մատուցեալ հարցանէր զնոսա, եթէ դուր ո՞րք է՛ք, կամ ուստի գայ՛ք, կամ. զ՞ո խրնդրէ՛ք, կամ ուստի եկի՛ք» (Բուգ., 3, Գ, 8):

Անհրաժեշտ է նշել, որ ոչ միայն զբարարում, այլև մի շարք հին լեզուներում ինչպես ընդհանրապես ասացական բայերի օբյեկտ երկրորդական նախադասությունները, այնպես էլ անուղղակի հարցում արտահայտող երկրորդական նախադասությունները գլխավորի հետ շաղկապով միանալով հանդերձ՝ երբեմն պահպանում են դերանձան ու բայի դեմքերի՝ ուրիշի ուղղակի խոսքին հատուկ կարգը. այսինքն՝ ունենում են և՛ ուղղակի, և՛ անուղղակի խոսքի յուրահատկություններ: Այդպիսիք է. օրինակ, հին ռուսերենը: Պետք է հաշվի առնել, որ անուղղակի հարցական նախադասությունների այդպիսի վիճակը լեզվի պատմական զարգացման անդյուր փուլերի հատկանիշ է, ժամանակակից գրական լեզվում ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերի այդպիսի շփոթումը հանդիսանում է լեզվի գոյություն ունեցող նորմաների կոպիտ խախտում, որը անթույլատրելի է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հաղորդակցության պրոցեսում:

Գլխավոր և երկրորդական նախադասությունների կապի սերտության վրա կարող են ազդել նաև որոշ այլ հանգամանքներ, ինչպիսիք են շաղկապի առկայությունը կամ բացակայությունը, ցուցական բառերի առկայությունը գլխավոր նախադասության մեջ և այլն, որոնց մասին մանրամասն խոսվելիք է վերջի:

Գրբարարում կառուցվածքային տեսակետից «ւշագրավ են անուղղակի հարցում արտահայտող այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները, որոնց որևէ անդամը, մեծ մասամբ ենթական, իր լրացումով հանդերձ փոխադրվում է գլխավոր նախադասություն, որտեղ կատարում է ուղիղ խնդրի պաշտոն: Դա մեծ մասամբ հետևանք է գլխավոր նախադասության ներգործական սեռի բայի մոտ ուղիղ խնդրի բացակայության. օրինակ՝

«Եւ զկամ զինուոյ գիտիին ոչ գիարգ լիճի» (Բուգ., 5, ԻԸ, 188); «Առաջին յագաւորքն Արշակունիք, որք գիտիինն զմեզ ո՞վ կաք կամ ուստի՛ կաք...» (Բուգ., 5, ԼԷ, 203); «Եւ անգամ ոչ գիտէր զայրն, թէ յորմէ գեղջէ իցէ» (Բուգ., 1, Բ, 226):

Քերված բոլոր օրինակներում էլ երկրորդական նախադասությունների ենթակաները մտել են գլխավոր նախադասությունների կառուցվածքի մեջ և այնտեղ կատարում են ուղիղ խնդրի պաշտոն: Վերոհիշյալ նախադասությունները սովորական ձևով կունենային հետևյալ տեսքը.

«Եւ զիտէին ոչ զիարդ լինի համ զինւոյ»: «Առաջին թաղարքն Արշակունիք որք զիտէինն՝ ով էար մե՛կ կամ ուստի էար»: «Եւ անգամ ոչ զիտէր թէ յորմէ զեզջէ իցէ այրն»:

Ինչպէս տեսանք, քննարկվող կարգի երկրորդական նախադասութիւնների տրամաբանական ենթակայի՝ զլիսավոր նախադասութեան կազմում քերականորեն ուղիղ խնդրի պաշտոնով հանդես գալը հետևանք է զլիսավոր նախադասութեան ներդրածական սեռի բայ-ստորոգյալի մոտ ուղիղ խնդրի բացակայութեան՝ շնայած այդպիսի ուղիղ խնդրի պակասը արդեն իսկ լրացված է երկրորդական նախադասութեամբ: Երբ զլիսավոր նախադասութեան ստորոգյալը արտահայտված է ասացական կամ մտածական բայով, այդ դեպքում, բացի երկրորդական նախադասութեան տրամաբանական ենթակայից, նրա տրամաբանական մի ուրիշ անդամն էլ է քերականորեն հանդես գալիս զլիսավոր նախադասութեան կազմում, ըստ որում նրանցից մեկը զլիսավոր նախադասութեան մեջ վարում է ուղիղ, իսկ մյուսը՝ վերաբերութեան անուղղակի խնդրի պաշտոն: Այդ տեսակետից հետաքրքրական է զանազան տարբերակներով վկայված հետևյալ բարդ ստորադասական նախադասութիւնը. «Իսկ զուր զո՞ւ ասէք զինևն քէ իցեմ» (Ագաթ., ԺԶ, 15): «Դուք զո՞վ ո՞վ ասէք զինևն, թէ իցեմ» (Ղուկ., Թ, 20): «Իսկ զուր զո՞ւ ուստեք ասէք զինևն, թէ իցեմ» (Արկ., Ը, 29):

Վերոհիշյալ երկրորդական նախադասութիւններում քերականորեն չեն արտահայտված ոչ միայն տրամաբանական ենթակաները, այլև ստորոգելիական վերադիրները: Այդ նախադասութիւնների տրամաբանական ենթակաները զլիսավոր նախադասութեան մեջ հանդես են եկել վերաբերութեան անուղղակի խնդրի պաշտոնով (զինէն), իսկ ստորոգելիական վերադիրները՝ ուղիղ խնդրի պաշտոնով (զո, զո որ): Եւրված օրինակներից երեւում է նաև, որ զլիսավոր նախադասութեան մեջ դերանվամբ արտահայտված վերաբերութեան անուղղակի խնդիրը (զինէն) միայն հոլովառութեամբ է կախված զլիսավոր նախադասութեան բայ-ստորոգյալից, իսկ դեմքով ու թվով միշտ համաձայնվում է երկրորդական նախադասութեան ստորոգյալին, ուստի երբ այդ վերաբերութեան անուղղակի խնդիրը զլիսավոր նախադասութեան մեջ ներդրածութեամբ դրված չի լինում, այն զորութեամբ ըմբռնվում է երկրորդական նախադասութեան ստորոգյալի բայական դեմքի շնորհիվ: Այդպիսին է հենց հիշյալ նախադասութեան Ազաթանգեղոսի մոտ վկայված տարբերակը. «Դուք զո՞ւ որ ուստեք ասէք, թէ իցեմ» (Ագաթ., ԾԴ, 467):

Այս հանգամանքը մի անգամ ևս ապացուցում է, որ բարդ ստորադասական նախադասութիւնը հանդիսանում է հաղորդակցական միասնական ու անքակտելի միավոր, որի բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց հետ. «Գլիսավորը և երկրորդականը (իմա՝ նախադասութիւնները—Թ. Հ.) անընդհատ փոխազդում են միմյանց... նրանցից յուրաքանչյուրը իր որոշ տարրերով ներթափանցում է մյուսի բուն շյուսվածքի (ТКАНЬ) մեջ...»:

Այսպիսով, հայերենում գործածութեան ընդարձակ ոլորտ ունեն այն ուղիղ խնդիր երկրորդական նախադասութիւնները, որոնք իրենց բովանդակութեամբ համապատասխանում են հարցական եղանակավորութիւն ունեցող ուրիշ ուղղակի խոսքին: Այդպիսի նախադասութիւնների առնչակցութիւնը:

³ А. Б. Шапиро, О принципах классификации подчиненных предложений. Русский язык в школе, 1937, № 2, стр. 35.

Նարցում արտահայտող ուրիշի ուղղակի խոսքի հետ ավելի ակնբախ է լինում, երբ նրանց համար գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու է ծառայում Նարցում արտահայտող որևէ ասացական կամ մտածական բայ, սկզբը այդ նախադասությունների խնդրառու բայը Նարցական իմաստից զուրկ, իմացական կամ զգալական ընկալման նշանակությամբ որևէ բայ-ստորոգյալ է, ապա այդպիսի նախադասությունները բովանդակությամբ բիշ են առնչակցվում Նարցական եղանակավորություն ունեցող ուրիշի ուղղակի խոսքին և միայն իրենց կառուցվածքային կսկան գծերով է, որ մտնում են անուղղակի Նարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների խմբի մեջ: Այդ նախադասությունները գլխավորին ստորադասվում են քչ կամ Նքչ շաղկապներով և իրենց կազմում հաճախ ունենում են որևէ Նարցական հարարերական գերանուն, որը սովորաբար դրվում է երկրորդական նախադասության սկզբում և իր վրա է կրում նախադասության տրամաբանական շեշտը, սակայն չի բացառվում նրա՝ նախադասության այլ մասում դրվելը: